# Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի

# ՈՐՈՇՈՒՄ Ը

## ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՓԱՍՏԻ ՄԱՍԻՆ

1989 թվականի հոկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության ստորաբաժանումների զինվորները զենք են կիրառել խաղաղ բնակչության դեմ, որի հետևանքով սպանվել է 1 մարդ և վիրավորվել 5-ը:

ԼՂԻՄ-ի բազմամսյա շրջափակումը, հայ ազգաբնակչության վատթարացող վիճակը, ազգամիջյան հարաբերություններում աճող լարվածությունը, Լեռնային Ղարաբաղի պրոբլեմների լուծման ուղղությամբ ժամանակին միջոցներ չձեռնարկելը իշխանության կենտրոնական իրավասու մարմինների կողմից, հազարավոր խաղաղ քաղաքացիների կյանքին սպառնացող պայթյունավտանգ իրավիճակ են ստեղծել ռեգիոնում:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ ազգաբնակչության կյանքի ապահովության երաշխիքների բացակայությունը արդարացի վրդովմունք է առաջացնում Հայաստանում, ողջ հայ ժողովրդի շրջանում:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդը **որոշում է.**

1. Դատապարտել Ստեփանակերտ քաղաքի խաղաղ բնակչության դեմ ներքին գործերի ստորաբաժանումների կողմից զենքի գործադրումը:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատներից և հասարակայնության ներկայացուցիչներից կազմել այս ողբերգական փաստի հանգամանքները ուսումնասիրող հանձնաժողով, որը ուսումնասիրության արդյունքները կներկայացնի ընտաշրջանին և մասսայական ինֆորմացիայի միջոցներով կապահովի դրա հրապարակայնությունը:

3. Հարց բարձրացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև կազմել տեղի ունեցած ողբերգական փաստի հանգամանքներն ուսումնասիրող դեպուտատական հանձնաժողով Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ:

4. Հարց բարձրացնել ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության և ԽՍՀՄ պաշտպանության մինիստրության առջև, ելնելով ռեգիոնում ստեղծված լարված իրավիճակից, նման միջադեպերը կանխելու նպատակով զորամիավորումների տեղաշարժերը կատարել՝ նախապես տեղյակ պահելով տեղական իշխանությունների մարմիններին:

**Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ**

**Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ**

15 հոկտեմբերի 1989 թվականի, քաղ. Երևան